

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2007 թվականի N 1490-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆԸ, ՏՆՕՐԻՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎՈՂ, ԻՆՉՊԵՍ ԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 532 ԵՎ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 379 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

1) գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվներ)՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվներ)՝ համաձայն N 2 հավելվածի.

3) հանրակրթական դպրոցներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվներ)՝ համաձայն N 3 հավելվածի.

4) հատուկ (օժանդակ) հանրակրթական դպրոցներին, ընդհանուր տիպի մանկատներին, երեխաների խնամքի և պաշտպանության կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվներ)՝ համաձայն N 4 հավելվածի.

5) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին (քոլեջներին) և նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվներ)՝ համաձայն N 5 հավելվածի.

6) բարձրագույն ուսումնական հաստատություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվներ)՝ համաձայն N 6 հավելվածի.

7) ծերերի և հաշմադամների տուն-ինտերնատներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվներ)՝ համաձայն N 7 հավելվածի:

8) մասնագիտացված մանկատներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվներ)՝ համաձայն N 8 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) հաշվարկային մակերես՝ շենքի, շինության բոլոր սենքերի մակերեսների հանրագումարը՝ բացառությամբ օժանդակ սենքերի մակերեսների:

2) օժանդակ սենքեր՝ սենքի, շինության հաշվարկային մակերեսում չներառված սենքերը, այդ թվում՝ միջանցքներ, նախամուտքեր, հանդերձարաններ, անցումներ, նկուղներ, աստիճանավանդակներ, վերելակային հորեր, ներքին բաց աստիճաններ և թեքահարթակներ, ինչպես նաև ինժեներատեխնիկական սարքավորումների և ցանցերի տեղադրման համար նախատեսված վերգետնյա և ստորգետնյա տարածքներ:

3) այլ տարածքներ՝ սույն նորմատիվների սենքերի կազմում չներառված, սակայն տվյալ կազմակերպության բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ գործառնական տարածքներ:

3. Սույն որոշման 1-ին կետով հաստատված տարածքների հաշվարկային մակերեսների նորմատիվները ենթակա են կիրառման շենքերի և շինությունների սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, լուսավորվածության, ինչպես նաև տարահանման նորմատիվային պահանջների կատարման ապահովմամբ:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված նորմատիվները չեն տարածվում պատմամշակութային անշարժ հուշարձան հանդիսացող շենքերի և շինությունների, ինչպես նաև մշակութի և արվեստի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման վրա՝ բացառությամբ միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցների, գեղարվեստական (երաժշտություն, պարարվեստ, կերպարվեստ, թատրոն, կիրառական արվեստ) ուղղվածությամբ մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև 7-ամյա կրթությամբ երաժշտական դպրոցների:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի «Պետական հիմնարկներին տրամադրվող տարածքների հաշվարկման նորմատիվները հաստատելու մասին» N 532 և մայիսի 3-ի «Նախագծային աշխատանքներ իրականացնող ընկերություններին անհատույց օգտագործման տրամադրվող տարածքների նորմատիվները հաստատելու մասին» N 379 որոշումները:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ս. Սարգսյան

2007 թ. դեկտեմբերի 24
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշման

**ԳԻՏԱԿԱՆ ԿԱՄ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ
ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ**

Հ/Հ	Տարածքի անվանումը	Մակերեսը (քառ. մ.)	Ծանոթություն
1.	Գիտական, գիտատեխնիկական և նախագծակոնստրուկտորական կազմակերպությունների սենքեր		
1.1.	Կազմակերպության ղեկավարության սենքեր		
ա)	կազմակերպության ղեկավարի աշխատասենյակ	36.0	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում
		45.0	300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
բ)	կազմակերպության ղեկավարի տեղակալի աշխատասենյակ	18.0	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում
		24.0	300-ից ավելի աշխատող կազմակերպություններում
գ)	համատեղ ընդունարան (կազմակերպության ղեկավարի և տեղակալի համար)	12.0	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում
		18.0	300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
դ)	խորհրդակցությունների սենյակ	0.8 (1 տեղի համար)	մինչև 500 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 30 տեղով
1.2.	Աշխատասենյակներ		հաշվարկում չի ներառված հատուկ սարքավորման տեղադրման համար նախատեսված տարածքը
ա)	լաբորատորիաներին կից	6.0	միայն բնական և տեխնիկական

	աշխատասենյակներ	(1 աշխատողի համար)	գիտությունների գիտական կազմակերպություններում
բ)	գիտական աշխատողի աշխատասենյակ	4.0 (1 աշխատողի համար)	միայն հասարակական գիտությունների գիտական կազմակերպություններում
գ)	Նախագծողի աշխատասենյակ	6.0 (1 նախագծողի համար)	միայն նախագծակոնստրուկտորական կազմակերպություններում
1.3.	Ծառայողական սենքեր (այդ թվում՝ հաշվապահություն, քարտուղարություն, արտադրական, մեքենագրական, ընդհանուր բաժիններ)	4.0 (1 աշխատողի համար)	
1.4.	Գիտատեխնիկական նշանակության սենքեր		
1.4.1. կոնֆերենց դահլիճ			
ա)	դահլիճ	0.6 (գրակալով կահավորված 1 տեղի համար)	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում՝
		0.7 (առանց գրակալի 1 տեղի համար)	1 հատ 200 տեղով, 300-600 աշխատող ունեցող կազմակերպություններում՝
բ)	դահլիճին կից նախասրահ	0.6 (դահլիճում 1 տեղի համար)	1 հատ 350 տեղով, 600-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում՝
գ)	դահլիճին կից գույքի և կահույքի պահեստ	0.03 (դահլիճում 1 տեղի համար)	1 հատ 500 տեղով
1.4.2. Գրադարան			
ա)	ընթերցասրահ	3.0 (1 ընթերցողի համար)	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 40 տեղ, 300-600 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 60 տեղ, 600-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 90 տեղ

բ)	գրապահոց	2.5	1000 միավոր գիրք պահպանության ֆոնդի համար
		2.7	1000 միավոր պարբերագիր պահպանության ֆոնդի համար
գ)	գրադարանավար	4.0 (1 աշխատողի համար)	
դ)	գրականության ընդունում և հանձնում	5.0 (1 աշխատողի համար)	ընթերցասրահի տարածքում
ե)	կատալոգ	0.6	1000 միավոր պահպանության ֆոնդի համար
զ)	կազմարարական և վերականգնման աշխատանքների տարածք	18.0	50000-200000 պահպանության ֆոնդի համար
է)	սպասարկող անձնակազմի աշխատասենյակ	4.0 (1 աշխատողի համար)	
1.4.3. Արխիվ			
ա)	ընթերցասրահ	3.0 (1 ընթերցողի համար)	մինչև 500 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 24.0քառ.մ, 500-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 36.0 քառ.մ
բ)	տեղեկատու-քարտարան (այդ թվում՝ էլեկտրոնային)	0.04	100 քարտ պահպանության համար
գ)	փաստաթղթերի պահոց	2.0	1000 միավոր պահպանության ֆոնդի համար
		0.4	նախագծակոնստրուկտորական կազմակերպություններում՝ 1000 միավոր ստանդարտ չափի գծագրական թերթ պահպանության ֆոնդի համար
դ)	միկրոֆիլմադարան	0.9	100 տուփ սկավառակային միկրոֆիլմերի պահպանության համար
ե)	սպասարկող անձնակազմի աշխատասենյակ	4.0 (1 աշխատողի համար)	

1.5. Բուֆետ			
ա)	ճաշասրահ և սննդի բաշխման գոտի	1.48 (ճաշասրահում 1 տեղի համար)	ճաշասրահում տեղերի քանակը հաշվարկվում է կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի 20%-ի չափով
բ)	խոհանոցային սենքեր	1.0 (ճաշասրահում 1 տեղի համար)	ճաշասրահում 12-ից ավելի տեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.43 քառ.մ.
գ)	սպասարկման սենքեր	0.45 (ճաշասրահում 1 տեղի համար)	ճաշասրահում 12-ից ավելի տեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.32 քառ.մ.
դ)	մթերքի ընդունման և պահեստավորման սենքեր	0.33 (ճաշասրահում 1 տեղի համար)	ճաշասրահում 12-ից ավելի տեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.25 քառ.մ.
1.6.	Սպասարկող անձնակազմի սենյակ	8.0	
1.7.	Բժշկական օգնության կետ	12.0	մինչև 150 աշխատող ունեցող կազմակերպություններում
		18.0	150-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
1.8. Պահեստներ			
ա)	թղթի	18.0	մինչև 500 աշխատող ունեցող կազմակերպություններում
		24.0	500-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
բ)	գրենական պիտույքների և գույքի	12.0x2	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում
		18.0x2	300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
1.9.	Սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	45 տղամարդու համար՝ 1 գուգարանակոնք. 1 պիտուար և 1 լվացարան, 30 կանանց

			համար՝ 1 զուգարանակոնք և 1 լվացարան, բայց ոչ պակաս՝ 1 զուգարանակոնք և 1 լվացարան աշխատողների թվից անկախ
1.10.	Այլ տարածքներ և օժանդակ սենքեր	ըստ հիմնավորման՝ գործառնական, այդ թվում՝ քաղաքացիների սպասարկման հետ կապված, ինչպես նաև հատակագծային առանձնահատկություններին և տեղադրվող սարքավորումների տեխնոլոգիական պահանջներին և բնութագրերին համապատասխան	
2.	Ի լրումն սույն հավելվածի 1.1-րդ ենթակետից 1.10-րդ ենթակետով սահմանված սենքերի՝		
2.1.	Գիտահետազոտական կազմակերպությունների սենքերի կազմում ներառվում են նաև		
2.1.1.	Գիտխորհրդի խորհրդակցությունների դահլիճ	0.8 (1 տեղի համար)	
2.1.2.	Լսարաններ	2.0 (գրասեղանով 1 տեղի համար)	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 1 լսարան 30 տեղով,
			300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 2 լսարան 30 տեղով
2.1.3.	Լաբորատորիաներ		միայն բնական և տեխնիկական գիտությունների գիտական կազմակերպություններում
ա)	քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ, ռադիոակտիվ նյութերի հետ աշխատելու համար նախատեսված սենքեր, քիմիական և տեխնոլոգիական	12.0 (լաբորատորիայի 1 աշխատողի համար)	լաբորատորիաների կազմն ընտրվում է ըստ տվյալ գիտական կազմակերպության ուղղվածության

	պրեպարատորական սենքեր		
բ)	միկրովերլուծական	6.0 (լաբորատորիայի 1 աշխատողի համար)	անհրաժեշտության դեպքում՝ ըստ տվյալ գիտական կազմակերպության ուղղվածության
2.2.	Նախագծակոնստրուկտորական կազմակերպությունների սենքերի կազմում ներառվում են նաև՝		
ա)	գլխավոր ճարտարագետի աշխատասենյակ	24.0	
բ)	նախագծային կաբինետ	36.0	մինչև 500 աշխատող ունեցող կազմակերպություններում
		54.0	500-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
գ)	գրունտների հետազոտման և պահեստավորման սենյակ	160.0	
դ)	ինժեներակրթարանական և գեոդեզիական արշավախմբի սենյակ	6.0 (1 աշխատողի համար)	500-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում՝ առնվազն 24.0 քառ.մ.
ե)	մակետավորման սենյակ	36.0	3 մակետավորողի համար
		54.0	4 մակետավորողի համար
		72.0	5 մակետավորողի համար
զ)	մանրակերտների, մոդելների և այլ ցուցադրական նյութերի պահեստ	6.0	
է)	մեխանիկական և ատաղծագործական արհեստանոցներ	54.0	500-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
ը)	գծագրերի, փաստաթղթերի բազմացման և պատճենահանման ծառայություն (ստանդարտ չափի գծագրական թերթերի համար, այդ թվում՝ լուսա և էլեկտրապատճենահանման. գծագրերի դասավորման տարածքներ.	180.0	մինչև 500 աշխատող ունեցող կազմակերպություններում
		280.0	500-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում

Ֆոտոլաբորատորիա, կազմարարական, աշխատանքների ընդունման և հանձնման սենքեր)		
-----------------------------------------------------------------------------------	--	--

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2007 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ
ՏԻՐԱՊԵՏՄԱՆԸ, ՏՆՕՐԻՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎՈՂ, ԻՆՉՊԵՍ
ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ
ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ**

Հ/Հ	Տարածքի անվանումը	Մակերեսը (քառ. մ.)	Ծանոթություն
1.	Պետական կառավարչական հիմնարկներ, պետական ոչ առևտրային կազմակերպություններ		
1.1.	Կազմակերպության (մարմնի) ղեկավարության սենքեր		
ա)	կազմակերպության (մարմնի) ղեկավարի աշխատասենյակ	36.0	մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպություններում
		45.0	100-300 աշխատող ունեցող կազմակերպություններում
		54.0	300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
բ)	կազմակերպության (մարմնի) ղեկավարի տեղակալի աշխատասենյակ	18.0	մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպություններում
		24.0	100-300 աշխատող ունեցող կազմակերպություններում
		36.0	300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
գ)	կազմակերպության (մարմնի) ղեկավարի օգնականների,	12.0	100 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում

	ռեֆերենտների, մամլո քարտուղարների և խորհրդականների աշխատասենյակներ		
դ)	կազմակերպության (մարմնի) ղեկավարի ընդունարան	12.0	մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպություններում
		18.0	100-300 աշխատող ունեցող կազմակերպություններում
		24.0	300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
ե)	կազմակերպության (մարմնի) ղեկավարի տեղակալի ընդունարան	12.0	մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպություններում
		18.0	100-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
1.2.	Աշխատասենյակներ	4.0 (1 աշխատողի համար)	աշխատողին առանձին աշխատասենյակ տրամադրելու դեպքում՝ 9.0 քառ.մ. (հաշվարկում չի ներառված հատուկ սարքավորման տեղադրման համար նախատեսված տարածքը)
1.3. Գիտատեղեկատվական նշանակության սենքեր			
1.3.1. Կոնֆերենց դահլիճ			
ա)	դահլիճ	0.8 (գրակալով կահավորված 1 տեղի համար)	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 1 հատ 200 տեղով, 300-600 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 1 հատ 350 տեղով,
		0.7 (առանց գրակալի 1 տեղի համար)	600-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 1 հատ 500 տեղով
բ)	նախասրահ	0.6 (դահլիճում 1 տեղի համար)	դահլիճին կից

գ)	գույքի և կահույքի պահեստ	0.03 (դահլիճում 1 տեղի համար)	դահլիճին կից
1.3.2.	Խորհրդակցությունների դահլիճ	0.9 (դահլիճում 1 տեղի համար)	դահլիճի տարածքը հաշվարկվում է կազմակերպության (մարմնի) աշխատողների ընդհանուր թվի 30%-ի չափով
1.3.3. Գրադարան			
ա)	ընթերցասրահ	3.0 (1 տեղի համար)	կազմակերպության 100 աշխատողի համար 1 տեղ
բ)	գրապահոց	2.5	1000 միավոր գիրք պահպանության ֆոնդի համար
		2.7	1000 միավոր պարբերագիր պահպանության ֆոնդի համար
գ)	գրադարանավար	4.0 (1 աշխատողի համար)	մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 1 աշխատող, 100-300 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 2 աշխատող, 300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 3 աշխատող
դ)	գրականության ընդունում և հանձնում	5.0 (1 աշխատողի համար)	Ընթերցասրահի տարածքում
ե)	կատալոգ	0.6	1000 միավոր պահպանության ֆոնդի համար
1.3.4. Արխիվ			
ա)	ընթերցասրահ	3.0 (1 ընթերցողի համար)	մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 26.0 քառ.մ, 100-300 աշխատող ունեցող կազմակերպություններում՝ 36.0 քառ.մ, 300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում՝

			54.0 քառ.մ,
բ)	տեղեկատու-քարտարան (այդ թվում՝ էլեկտրոնային)	0.04	100 քարտ պահպանության համար
գ)	փաստաթղթերի պահոց	2.0	1000 միավոր պահպանության ֆոնդի համար
դ)	միկրոֆիլմադարան	0.9	100 տուփ սկավառակային միկրոֆիլմերի պահպանության համար
ե)	սպասարկող անձնակազմի աշխատասենյակ	4.0 (1 աշխատողի համար)	հաշվարկում չի ներառված հատուկ սարքավորման տեղադրման համար նախատեսված տարածքը
1.4. Բուֆետ			
ա)	ճաշարահ և սննդի բաշխման գոտի	1.48 (ճաշարահում 1 տեղի համար)	ճաշարահում տեղերի քանակը ընդունվում է կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի 20%-ի չափով
բ)	խոհանոցային սենքեր	1.0 (ճաշարահում 1 տեղի համար)	ճաշարահում 12-ից ավելի նստատեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.43 քառ.մ.
գ)	սպասարկման սենքեր	0.45 (ճաշարահում 1 տեղի համար)	ճաշարահում 12-ից ավելի նստատեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.32 քառ.մ.
դ)	մթերքի ընդունման և պահեստավորման սենքեր	0.33 (ճաշարահում 1 տեղի համար)	ճաշարահում 12-ից ավելի նստատեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.25 քառ.մ.
1.5. Տեխնիկական սպասարկման սենքեր			
ա)	վերանորոգման արհեստանոց	36.0	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում
		54.0	300-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
բ)	գրենական պիտույքների, գույքի և կահույքի	12.0x2	մինչև 300 աշխատող ունեցող կազմակերպություններում

	պահեստներ	18.0x2	300-600 աշխատող ունեցող կազմակերպություններում
		24.0x2	600-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
գ)	թղթաթափոնի մշակման և փաթեթավորման սենք	24.0	600-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում
1.6.	Պատճենահանման ծառայություն	6.0 (1 աշխատողի համար)	
1.7.	Բժշկական օգնության կետ	12.0	մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպություններում
		18.0	100-ից ավել աշխատող ունեցող կազմակերպություններում
1.8.	Սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	45 տղամարդու համար` 1 զուգարանակոնք, 1 պիսուար և 1 լվացարան, 30 կանանց համար` 1 զուգարանակոնք և 1 լվացարան, բայց ոչ պակաս` 1 զուգարանակոնք և 1 լվացարան աշխատողների թվից անկախ
2.	Արխիվներ (որպես ինքնուրույն գործող կազմակերպություն)		աշխատողների թվաքանակն ընդունվում է ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված աշխատողների առավելագույն թվաքանակին համապատասխան
ա)	արխիվապահոցներ	2.0	1000 միավոր պահպանման ֆոնդի համար
բ)	ընթերցասրահներ	5.0 (1 ընթերցողի համար)	
գ)	ցուցահանդեսային սրահ	70.0	1 ցուցադրության համար
դ)	լաբորատորիաներ	7.0 (1 աշխատողի համար)	
ե)	ախտահանման սենյակ	16.0	1 աշխատող մեքենայի համար

զ)	կինոդահլիճ	1.0 (1 կինոուսումնասիրողի համար)	
է)	աշխատասենյակ	6.0 (1 աշխատողի համար)	
ը)	միկրոֆիլմադարան	0.9	100 տուփ սկավառակային միկրոֆիլմերի պահպանության համար
3.	Այլ տարածքներ և օժանդակ սենքեր	ըստ հիմնավորման՝ գործառնական, այդ թվում՝ քաղաքացիների սպասարկման հետ կապված, ինչպես նաև հատակագծային առանձնահատկություններին և տեղադրվող սարքավորումների տեխնոլոգիական պահանջներին և բնութագրերին համապատասխան	
4.	Մեկ ընդհանուր շենքում մի քանի կազմակերպությունների (մարմինների) տեղակայման դեպքում՝ սույն հավելվածի 1.3-րդ կետի «ա» և «գ» ենթակետերով, 1.4-րդ կետի «ա» և «գ» ենթակետերով, ինչպես նաև 1.6-րդ և 1.7-րդ կետերով սահմանված սենքերը կամ դրանց մի մասը կարող են օգտագործվել այդ կազմակերպությունների (մարմինների) կողմից համատեղ՝ հաշվարկային հիմք ընդունելով նշված սենքերից օգտվող աշխատողների ընդհանուր թվաքանակը:		

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2007 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշման

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿՎԱԶԱԳՈՒՅՆ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ**

Հ/Հ	Տարածքի անվանումը	Մակերեսը (քառ.մ.)	Ծանոթություն
1.	Ուսումնական մաս		
1.1.	1-ին դասարան		

ա)	դասարան-խաղասենյակ	3.0 (1 աշակերտի համար)	դասավանդումը կազմակերպվում է խաղերի կազմակերպման ձևով
բ)	հանգստի սենյակ	2.5 (1 աշակերտի համար)	
գ)	ռեկրեացիա	1.0 (1 աշակերտի համար)	
1.2.	Տարրական դպրոցի (2-4-րդ) դասարաններ		
ա)	դասարան (առանձին խմբային պարապմունքների հնարավորությամբ)	3.0 (1 աշակերտի համար)	
բ)	ձեռքի աշխատանքի, մոդելավորման, տեխնիկական խաղալիքների և կիրառական արվեստի սենյակ	3.6 (1 աշակերտի համար)	տարրական դպրոցի կազմում նախատեսվում է 1 դասասենյակ
գ)	համապիտանի դասասենյակ՝ երկարօրյա խմբերի համար	5.0 (1 աշակերտի համար)	դասասենյակի լրակազմը՝ 12 աշակերտ
դ)	ռեկրեացիա	1.6 (1 աշակերտի համար)	
ե)	մեթոդական կաբինետ-ուսուցչանոց	40.0	
1.3.	Միջին դպրոցի դասարան-կաբինետներ (5-9-րդ դասարաններ)		
ա)	դասարան-ուսումնական կաբինետ	2.0-2.5 (1 աշակերտի համար)	
բ)	դասարան-կաբինետ՝ անհատական պարապմունքների համար	2.5 (1 աշակերտի համար)	
գ)	ռեկրեացիա	1.6 (1 աշակերտի համար)	
1.4.	Ավագ դպրոցի ուսումնական կաբինետներ (10-12-րդ դասարաններ), միջին և ավագ		

	դպրոցի մասնագիտացված կաբինետներ		
ա)	ընդհանուր տեսական ուղղվածության դասարան-կաբինետներ	2.5 (1 աշակերտի համար)	
բ)	ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության	3.5	
	ուսումնական կաբինետներ	(1 աշակերտի համար)	
գ)	օտար լեզուների կաբինետ	3.5 (1 աշակերտի համար)	
դ)	համակարգչային և հաշվիչ տեխնիկայի կաբինետ	6.0 (1 աշակերտի համար)	
ե)	նկարչության և գծագրության կաբինետ	6.0 (1 աշակերտի համար)	
զ)	ռեկրեացիա	1.6 (1 աշակերտի համար)	
2.	Ուսումնական մասի գործառնական սենքերի խումբ		
2.1.	Վարչական նշանակության սենքեր		
ա)	տնօրենի կաբինետ	25.0	
բ)	ուսումնադաստիարակչական գծով տնօրենի տեղակալի կաբինետ	10.0	
գ)	արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպչի կաբինետ	12.0	
դ)	վարչատնտեսական գծով տնօրենի տեղակալի կաբինետ	10.0	
ե)	գրասենյակ	12.0	
3.	Տեխնիկական սպասարկման սենքեր և սանհանգույցներ		
ա)	տեխնիկական անձնակազմի	12.0	

	սենյակ		
բ)	հավաքարարի գույքի սենյակ	8.0	
գ)	աշակերտների սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 զուգարանակոնք՝ 20 աղջիկների համար, 1 լվացարան՝ 30 աղջիկների համար 1 զուգարանակոնք և 1 լվացարան՝ 30 տղաների համար, 1 պիսուար 60 տղաների համար
դ)	անձնակազմի սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 զուգարանակոնք և 1 լվացարան
4. Բուժական նշանակության սենյակներ			
ա)	բժշկի կաբինետ	21.0	
բ)	բուժմիջամտությունների (պրոցեդուրային) սենյակ	16.0	
գ)	ատամնաբույժի կաբինետ	12.0	
5. Տեխնոլոգիաների ուսումնասիրման սենյակներ (աշխատանքի ուսուցում)			
ա)	մետաղամշակման տեխնոլոգիաների ուսումնասիրման արհեստանոցներ	5.0-7.0 (1 աշակերտի համար)	արհեստանոցի լրակազմը՝ 12 աշակերտ
բ)	փայտամշակման տեխնոլոգիաների ուսումնասիրման արհեստանոցներ	5.0-7.0 (1 աշակերտի համար)	
գ)	գործվածքների մշակման և տեխնոլոգիաների ուսումնասիրման արհեստանոցներ	6.0-8.0 (1 աշակերտի համար)	
դ)	խոհարարական կաբինետ	4.5 (1 աշակերտի համար)	
ե)	ռադիոէլեկտրոնիկայի և էլեկտրատեխնիկական սարքավորումների կաբինետ	9.0 (1 աշակերտի համար)	
զ)	ուսուցիչ-վարպետների սենյակ	18.0	

է)	հումքի, նյութերի և պատրաստի արտադրանքի պահեստ	24.0	
6. Տեղեկատվական նշանակության սենքեր			
ա)	գրադարան-տեղեկատվական կենտրոն՝ դիֆերենցված գոտիներով, այդ թվում՝ ընթերցասրահ, պահպանության ֆոնդ	2.4 (1 ընթերցողի համար)	ընթերցասրահում տեղերի քանակը ընդունվում է աշակերտների ընդհանուր թվի 10%-ի հաշվարկով
բ).	5-12 դասարանների ուսուցչանոց-մեթոդական կաբինետ հանգստի գոտու հետ միասին	6.0 (1 ուսուցչի համար)	
7. Հանդիսությունների դահլիճի սենքեր			
ա)	հանդիսասրահ	0.7 (1 հանդիսատեղի համար)	հանդիսասրահում տեղերի քանակն ընդունվում է աշակերտների ընդհանուր թվի առնվազն 60%-ի հաշվարկով, ուսուցիչների համար նախատեսվող տեղերի քանակը որոշվում է 1 դասարանին՝ 2 ուսուցիչ հաշվարկով
բ)	գույքի պահեստ	12.0	
գ)	դերասանական սենյակներ	18.0	
դ)	տեխնիկական կենտրոն	48.0	ռադիոհանգույց, հաղորդավարական, սարքավորումների վերանորոգման սենք
ե)	սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 գուգարանակոնք, 1 լվացարան և 2 պիսուար՝ 100 տղաների համար, 1 գուգարանակոնք և 1 լվացարան՝ 50 աղջիկների համար
8. Արտադասարանական խմբակային պարապմունքների սենքեր			խմբում պարապողների հաշվարկային թիվը՝ 12 աշակերտ
ա)	կիրառական արվեստի, երաժշտության, տեխնիկական	60.0	

	մոդելավորման, լուսանկարչական, պատանի բնասերի		
բ)	ուսուցիչների սենյակ	18.0	
9.	Մարգաառողջարարական նշանակության սենքեր		
9.1.	Ուսումնամարզական դահլիճներ		
ա)	մարզական դահլիճ	<u>288.0</u> (12.0մx24.0մ.)	մարզական դահլիճի հատակի մակերեսը՝ 1 աշակերտին ոչ պակաս 1.4 քառ.մ.
բ)	հրահանգիչ-մարզչի սենյակ	10.0	
գ)	մարզական գույքի պահեստ	16.0	
դ)	հավաքարարի գույքի սենյակ	4.0	
ե)	հանդերձարաններ, սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	2 զուգարանակոնք, 2 լվացարան և 2 ցնցուղարան
10.	Ճաշարան		
10.1.	Ճաշարահ՝ սննդի Բաշխման կետով	1.0 (Ճաշարահում 1 տեղի համար)	Ճաշարահում տեղերի քանակն ընդունվում է աշակերտների, մանկավարժների և վարչական աշխատողների ընդհանուր թվի 50%-ի հաշվարկով
10.2	խոհանոցային սենքեր	0.77 (Ճաշարահում 1 տեղի համար)	Ճաշարահում 100-ից ավելի տեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.42 քառ.մ.
ա)	սպասարկման սենքեր	0.44 (Ճաշարահում 1 տեղի համար)	Ճաշարահում 100-ից ավելի տեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.3 քառ.մ.
բ)	մթերքի ընդունման և պահեստավորման սենքեր	0.4 (Ճաշարահում 1 տեղի համար)	Ճաշարահում 100-ից ավելի տեղերի դեպքում, յուրաքանչյուր հաջորդ տեղի համար՝ 0.3 քառ.մ.
գ)	լվացարաններ	ըստ նորմերի և հատակագծային	Ճաշարահում յուրաքանչյուր 30 տեղի

		լուծման	համար՝ 1 լվացարան
10.3.	Հանդերձարաններ և սանհանգույցներ՝ ճաշարանի աշխատողների համար	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 գուգարանակոնք, 1 լվացարան և 1 ցնցուղ
11.	Միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցներ		
11.1.	Ուսումնական մաս		սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերի
11.2.	Ուսումնական մասի գործառնական սենքերի խումբ		սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված նորմերի
11.3.	Անհատական պարապմունքների դասասենյակներ	24.0-36.0	սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ աշակերտների թվի և ուսումնական ծրագրերի
11.4.	Խմբային պարապմունքների սենքեր	6.0-8.0 (1 աշակերտի համար)	երգչախմբային, սոլֆեջիոյի և մասնագիտական ուղղվածություն ունեցող խմբային պարապմունքների համար նախատեսված այլ սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ աշակերտների թվի և ուսումնական ծրագրերի
11.5.	Տեխնիկական սպասարկման սենքեր և սանհանգույցներ		սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված նորմերի
11.6.	Բուժական նշանակության սենքեր		սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված նորմերի

11.7.	Տեղեկատվական նշանակության սենքեր	սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված նորմերի
11.8.	Հանդիսությունների դահլիճի սենքեր	1) սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված նորմերի. 2) հանդիսասրահում տեղերի քանակն ընդունվում է աշակերտների և ուսուցիչների ընդհանուր թվի 80%-ի համար
11.9.	Մարզաառողջարարական նշանակության սենքեր	սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված նորմերի
11.10.	Ճաշարան	սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 10-րդ կետով սահմանված նորմերի
12.	Պարարվեստի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն	սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 11 կետի 11.1. 11.2 և 11.5-11.10 ենթակետերով սահմանված նորմերի: Մասնագիտական ուղղվածություն ունեցող խմբային և անհատական պարապմունքների համար նախատեսված այլ սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ աշակերտների թվի ուսումնական ծրագրերի և սույն հավելված 14-րդ

		կետով սահմանված հիմնավորման
13.	Երաժշտական դպրոցներ (7-ամյա)	
13.1.	Ուսումնական մասի գործառնական սենքերի խումբ	սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված նորմերի
13.2.	Անհատական պարապմունքների դասասենյակներ	24.0-36.0 սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ աշակերտների թվի և ուսումնական ծրագրերի
13.3.	Խմբային պարապմունքների սենքեր	6.0-8.0 (1 աշակերտի համար) երգչախմբային, սոլֆեջիոյի և մասնագիտական ուղղվածություն ունեցող խմբային պարապմունքների համար նախատեսված այլ սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ աշակերտների թվի և ուսումնական ծրագրերի
13.4.	Տեխնիկական սպասարկման սենքեր և սանհանգույցներ	սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված նորմերի
13.5.	Տեղեկատվական նշանակության սենքեր	սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված նորմերի
13.6.	Հանդիսությունների դահլիճի սենքեր	1) սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված նորմերի. 2) հանդիսասրահում տեղերի քանակն ընդունվում է աշակերտների և ուսուցիչների ընդհանուր

			թվի 80%-ի համար
13.7. Բուժետ			
ա)	Ճաշարահ և սննդի բաշխման գոտի	1.0 (Ճաշարահում 1 տեղի համար)	Ճաշարահում տեղերի քանակը հաշվարկվում է աշակերտների և ուսուցիչների ընդհանուր թվի 50%-ի համար
բ)	խոհանոցային սենքեր	0.65 (Ճաշարահում 1 տեղի համար)	
գ)	մթերքի ընդունման և պահեստավորման սենքեր	0.33 (Ճաշարահում 1 տեղի համար)	
14.	Այլ տարածքներ և օժանդակ սենքեր	ըստ հիմնավորման՝ գործառնական և հատակագծային առանձնահատկություններին, ինչպես նաև տեղադրվող սարքավորումների տեխնոլոգիական և բնութագրերին համապատասխան	

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2007 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշման

ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԻ ՄԱՆԿԱՏՆԵՐԻՆ, ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԳՈՒՅՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Հ/Հ	Տարածքի անվանումը	Մակերեսը (քառ. մ.)	Ծանոթություն
1.	Ուսումնական մաս		
1.1.	Դասարաններ	2.0 (1 աշակերտի համար)	
1.2.	Ուսումնական կաբինետներ		
ա)	լեզվի և գրականության, օտար լեզուների, պատմության,	2.5 (1 աշակերտի	

	աշխարհագրության, մաթեմատիկայի	համար)	
բ)	համակարգչային և հաշվիչ տեխնիկայի	3.6 (1 աշակերտի համար)	դասարանում աշակերտների ընդհանուր թվի 50%-ի համար
գ)	լաբորատորիա կաբինետներին կից	16.0	
դ)	ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության, բնագիտության լաբորատորիաներ	3.0 (1 աշակերտի համար)	
ե)	լաբորանտական սենյակ լաբորատորիաներին կից	16.0	
2. Խմբակային պարապմունքների սենքեր			
ա)	երկարօրյա խմբերի պարապմունքների (2-4-րդ դասարանների աշակերտների համար)	2.0 (1 աշակերտի համար)	դասարանի լրակազմը՝ 30 աշակերտ
բ)	տեխնիկական մոդելավորման	4.5 (1 աշակերտի համար)	դասարանի լրակազմը՝ 10 աշակերտ
գ)	պատանի բնասերի	3.6 (1 աշակերտի համար)	դասարանի լրակազմը՝ 20 աշակերտ
դ)	նկարչության և քանդակի ստուդիա	3.6 (1 աշակերտի համար)	դասարանի լրակազմը՝ 20 աշակերտ
ե)	պարի և թատերական արվեստի ստուդիա	3.7 (1 աշակերտի համար)	դասարանի լրակազմը՝ 20 աշակերտ
զ)	կինոֆոտոլաբորատորիա	2.7 (1 աշակերտի համար)	1 դասարանի լրակազմը՝ 20 աշակերտ
3. Աշխատանքի ուսուցման և մասնագիտական կողմնորոշման սենքեր			
3.1.	Աշխատանքի ուսուցման՝ արհեստանոց (2-4-րդ դասարանների աշակերտների համար)	2.0 (1 աշակերտի համար)	
3.2.	Աշխատանքի ուսուցման		նախատեսվում են

	արհեստանոցներ (5-ից բարձր դասարանների աշակերտների համար)		դասարանում աշակերտների ընդհանուր թվի 50%-ի համար
ա)	մետաղամշակման	4.5 (1 աշակերտի համար)	
բ)	փայտամշակման	4.5 (1 աշակերտի համար)	
գ)	կարի	3.6 (1 աշակերտի համար)	
դ)	խոհարարական	2.5 (1 աշակերտի համար)	
ե)	համակցված արհեստանոց տեխնիկական աշխատանքների համար	4.5 (1 աշակերտի համար)	
3.3.	Ուսուցչի (վարպետի) սենյակ	16.0	
3.4.	Պահեստներ		
ա)	հումքի և պատրաստի արտադրանքի	16.0	
բ)	գույքի	8.0	
4.	Ննջասենյակներ	4.0 (1 երեխայի համար)	1-4-րդ դասարանների աշակերտների համար՝ 4-6 տեղանոց, 5-րդից բարձր դասարանների աշակերտների համար՝ 2-4 տեղանոց
4.1.	Մանհանգույցներ (յուրաքանչյուր ննջասենյակին կից)	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 զուգարանակոնք, 1 լվացարան և 1 ցնցուղարան
5. Վարչական նշանակության սենքեր			
ա)	տնօրենի կաբինետ	25.0	
բ)	ուսումնադաստիարակչական գծով տնօրենի տեղակալի կաբինետ	10.0	
գ)	ուսուցչանոց-մեթոդական կաբինետ	32.0	

դ)	արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպչի կաբինետ	12.0	
ե)	վարչատնտեսական գծով տնօրենի տեղակալի կաբինետ և հաշվապահություն	18.0	
զ)	գրասենյակ	12.0	
է)	հերթապահ դաստիարակի սենյակ	16.0	
ը)	տեխնիկական անձնակազմի սենյակ	12.0	
թ)	անձնակազմի սանհանգույց	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 զուգարանակոնք, 2 լվացարան և 1 ցնցուղարան
6. Մարզատոռոջարարական նշանակության սենքեր			
ա)	ուսումնամարզական դահլիճ	288.0	1 դահլիճ՝ 12.0x24մ. չափերով
բ)	հրահանգչի սենյակ	24.0	
գ)	մարզական գույքի պահեստ	16.0	
դ)	հանդերձարաններ, սանհանգույցներ, ցնցուղարաններ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	2 զուգարանակոնք, 2 լվացարան, 2 ցնցուղարան, 1 ցնցուղարանին՝ 2 տեղ հանդերձարանում
7. Հանդիսությունների դահլիճի սենքեր			
ա)	դահլիճ	0.7 (1 հանդիսատեղի համար)	տեղերի քանակը ընդունվում է սովորողների ընդհանուր թվի առնվազն 50%-ի հաշվարկով
բ)	բեմական գույքի պահեստներ	8.0	
գ)	դերասանական սենյակներ	18.0	
դ)	տեխնիկական կենտրոն	18.0	
ե)	ակումբային մաս	50.0	
զ)	սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 զուգարանակոնք և 1 լվացարան՝ աղջիկների համար, 1 զուգարանակոնք, 1 պիսուար և 1 լվացարան՝ տղաների համար
8. Գիտատեղեկատվական նշանակության սենքեր			

ա)	գրադարան-տեղեկատվական կենտրոն, այդ թվում՝ ընթերցասրահ, գրապահոց և դասագրքերի պահեստ	50.0	
բ)	մեթոդական կաբինետներ	32.0	
9. Բուժական նշանակության սենքեր			
9.1. Բժշկական կաբինետներ			
ա)	բժշկի կաբինետ	12.0	
բ)	ատամնաբույժի կաբինետ	12.0	
գ)	բուժֆիզամտությունների (պրոցեդուրային) սենյակ	15.0	
դ)	հիվանդասենյակներ	12.0	1 հիվանդասենյակ 4 դասարանի համար
9.2. Կարանտինային բաժանմունք			
ա)	հիվանդասենյակներ	$\frac{24.0}{2 \times (9.0 + 3.0)}$	կից սանհանգույցներով
բ)	բուֆետ սննդի բաշխման կետով	6.0	
գ)	սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	2 ցնցուղարան, 2 զուգարանակոնք և 2 լվացարան
10.	Հանգստի և դասերը պատրաստելու սենյակ	1.25 (1 աշակերտի համար)	հաստատությունում բնակվող աշակերտների ընդհանուր թվի 50%-ի հաշվարկով)
11.	Ռեկրեացիա	0.7 (1 աշակերտի համար)	
12.	Հյուրասենյակ	0.1 (1 աշակերտի համար)	ոչ պակաս 16.0 քառ.մ.–ից
13. Ճաշարան			
ա)	Ճաշարան՝ սննդի բաշխման կետով	1.0 (Ճաշարանում 1 նստատեղի համար)	նստատեղերի քանակը ընդունվում է աշակերտների ընդհանուր թվի 50%-ի հաշվարկով
բ)	խոհանոցային սենքեր	160.0	
գ)	սանհանգույցներ սպասարկող անձնակազմի համար	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 զուգարանակոնք, 1 լվացարան և 1 ցնցուղարան 1 լվացարան՝ 8

			աշակերտների համար, 1 ոտքի լոգնոց 12 աշակերտների համար, 1 զուգարանակոնք և 1 պիսուար՝ 20 տղաների համար,
14.	Լոգարաններ, սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 զուգարանակոնք 15 աղջկա համար, 1 անձնական հիգիենայի սենյակ (ոչ պակաս 3 քառ.մ. մակերեսով)՝ յուրաքանչյուր 70 հոգու համար, 1 ցնցուղ՝ 18 աշակերտների համար, 1 ցնցուղին՝ 2 տեղ հանդերձարանում
15.	Հագուստի մաքրման սենյակ	0.1 (1 աշակերտի համար)	
16.	Հագուստի և կոշիկի չորապահարան	0.2 (1 աշակերտի համար)	
17.	Լվացքատուն	28.0	190 տեղի համար
18.	Այլ տարածքներ և օժանդակ սենյակներ	ըստ հիմնավորման՝ գործառնական և հատակագծային առանձնահատկություններին, ինչպես նաև տեղադրվող սարքավորումների տեխնոլոգիական պահանջներին և բնութագրերին համապատասխան	

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2007 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշման

**ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
(ՔՈՒԷԶՆԵՐԻՆ) ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ**

Հ/Հ	Տարածքի անվանումը	Մակերեսը (քառ.)	Ծանոթություն
-----	-------------------	-----------------	--------------

		մ.)	
1.	Ուսումնական մաս (ուսումնական մասի սենքերի լրակազմը և մակերեսներն ընդունվում են ըստ սույն որոշմամբ հաստատված «Հավելված 3»-ի 1.4 կետի «ա»-ից «զ» ենթակետերով սահմանված նորմերի)		
2.	Լաբորատորիաներ		
ա)	ընդհանուր տեսական ուղղվածության լաբորատորիաներ	2.2 (1 ուսանողի համար)	լաբորատորիաների լրակազմն ընդունվում է ըստ հաստատության
բ)	տեխնիկական ուղղվածության մասնագիտացման լաբորատորիաներ	2.4 (1 ուսանողի համար)	մասնագիտացման ուղղվածության
գ)	լաբորանտական սենյակ	32.0	
3.	Մասնագիտացված լսարաններ	2.0-2.5 (1 ուսանողի համար)	սենքերի լրակազմն ընդունվում է ըստ հաստատության մասնագիտացման ուղղվածության
ա)	պրեպարատորական սենյակ լսարանին կից	18.0	մինչև 100 տեղ ունեցող լսարաններում
4.	Գծագրության, կուրսային և դիպլոմային աշխատանքների կաբինետներ	2.4 (1 ուսանողի համար)	մեկ կաբինետը նախատեսվում է 12-50 ուսանողների համար
5.	Գիտատեղեկատվական և ուսումնամեթոդական նշանակության սենքեր		
ա)	ուսումնամեթոդական կաբինետ	36.0	
բ)	դասախոսների և ասումնաարտադրական գծով հրահանգիչների կաբինետ	2.5 (1 հոգու համար)	
գ)	գրադարան-տեղեկատվական կենտրոն՝ դիֆերենցված գոտիներով, այդ թվում՝ պահպանության ֆոնդ, ընթերցասրահ	2.4 (1 ընթերցողի համար)	ընթերցասրահում տեղերի քանակը ընդունվում է ուսանողների և դասախոսների ընդհանուր թվի 9%-ի հաշվարկով
6.	Ուսումնաարտադրական նշանակության սենքեր		
ա)	մետաղամշակման և փայտամշակման տեխնոլոգիաների	5.0-7.0 քառ.մ (1 ուսանողի համար)	սենքերի լրակազմն ընդունվում է ըստ հաստատության

	ուսումնասիրման արհեստանոցներ		մասնագիտացման ուղղվածության և ուսումնական ծրագրերի
բ)	գործվածքների մշակման և տեխնոլոգիաների ուսումնասիրման արհեստանոցներ	6.0-8.0 քառ.մ (1 ուսանողի համար)	
գ)	խոհարարական	4.5 (1 ուսանողի համար)	
դ)	ռադիոէլեկտրոտեխնոլոգիաներ	5.0 քառ.մ (1 ուսանողի համար)	
ե)	տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվիչ սարքավորումներ	4.5 (1 ուսանողի համար)	
զ)	տնային և աշխատանքային հագուստի պահեստասենյակ	0.4 (1 աշխատատեղի համար)	
է)	պահեստներ	0.12 (1 աշխատատեղի համար)	
ը)	հանդերձարաններ, ցնցուղարաններ, սանհանգույցներ	ըստ նորմերի և հատակագծային լուծման	1 զուգարանակոնք՝ 20 աղջիկների համար. 1 զուգարանակոնք և 1 պիսուար 30 տղաների համար, 15 ուսանողի համար՝ 1 ցնցուղ, 1 ցնցուղին՝ 2 տեղ հանդերձարանում
7.	Մարզաառողջարարական նշանակության սենքեր		
ա)	մարզադահլիճ	<u>288.0</u> (24մx12մ.)	մինչև 600 ուսանող ունեցող հաստատություններում 1 դահլիճ
		<u>540.0</u> (30մx18մ.)	600-ից ավելի ուսանող ունեցող հաստատություններում՝ 1

			դահլիճ
